ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ազգային արխիվի ֆ. 56-ում (Սինոդի օրագրություններ) ցուցակ 14-ի գործ 207-ը պարունակում է մեծ քանակությամբ հետաքրքիր գրագրություններ, որոնք վերաբերում են Վենետիկի Մխիթարյան միաբանության կազմավորման 200-ամյա հոբելյանի տոնակատարության նախապատրաստական աշխատանքներին և հոբելյանական հանդիսություններին: Արխիվային գործն սկսված է 1901 թ. հուլիսի 27-ին, ավարտվում է սեպտեմբերի 14-ով: XX դարասկզբին Մխիթարյան միաբանության Վենետիկի մասնաճյուղն իր սկզբնավորումը կապում էր 1701 թ. սեպտեմբերի 8-ին (Ս. Տիրամոր ծննդյան օրը) Կ. Պոլսում 7 դպրի և 4 աբեղայի մասնակցությամբ Մխիթար Սեբաստացու կողմից փոքրիկ միաբանություն ստեղծելու հետ (միաբանության այդ ավանդույթն այժմ փոխվել է. նրանք իրենց միաբանության կազմավորման սկիզբը համարում են 1717 թ. սեպտեմբերի 8-ը, երբ մխիթարյանները հաստատվեցին Վենետիկի Ս. Ղազար կղզում): Վենետիկի Մխիթարյան միաբանության 200-ամյա հոբելյանի տոնակատարության մասին հատուկ հայտարարագիր է տպվում եվրոպական և հայկական մամուլի բազմաթիվ օրգաններում, այնուհետև պաշտոնական հատուկ գրություն-հրավերներ են ուղարկվում հայ բարձրաստիճան հոգևորականներին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, Կ. Պոլսի առաքելական և կաթոլիկ հայոց պատրիարքներին՝ խնդրելով իրենց ներկայությամբ պատվել տոնախմբությունը, իսկ եթե դա հնարավոր չէ, ներկայացուցիչ ուղարկել: Ամենայն Հայոց կաթողիկոսը հատուկ կոնդակով իր պաշտոնական ներկայացուցիչ է նշանակում Եվրոպայի հոգևոր թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յութուճյանին:

Ընթերցողի դատին ներկայացված ներքոհիշյալ փաստաթղթերն ամբողջական գործը չեն, այլ՝ առավել կարևորները և հետաքրքիրները: Դրանք ոչ միայն լրիվ պատկերացում են տալիս տոնակատարության ընթացքի, մասնակիցների ելույթների, միաբանության անդամների բարձր կարգավիճակի մասին, այլև բացահայտում են հայ եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության վերաբերմունքը, որն ավելի կոնկրետ դրսևորում ստացավ երկու տարի անց՝ 1903 թ. (հունիսի 12-ի օրենքի՝ հայ եկեղեցու գույքի բռնագրավելու տեսքով):

Հրապարակվող փաստաթղթերը տպագրում ենք՝ հետևելով դրանց տրամաբանական բովանդակությանը և ոչ թե՝ ժամանակագրությանը:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

-1

Յոբելեան երկու հարիւրամեայ հաստատութեան Մխիթարեան միաբանութեան, որ ի Վենետիկ Նորին սրբազնութեան Տ.Տ. Մկրտչի Ա վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց յէջմիածին

Վեհափառ Տէր

Վաղ իսկ ծանուցուած է ազգային և օտարազգի լրագրաց միջոցաւ, թէ Մխիթարեան միաբանութիւնն կը պատրաստուի ի Վենետիկ տոնելու իւր մեծ հիմնադրին Մխիթարայ և իւր անուամբ հաստատուած ուխտին երկհարիւրամեայ յոբելեանը:

Հայ ազգը, ինչպես գիտէք, Մխիթարայ կը պարտի մեծաւ մասամբ իւր ներկայ լուսաւորութիւնը, զոր ստացաւ Արևմուտքէն և իւր ներքին ուժերու բարգաւաճումէն և ինչպես յայտնի է Մխիթարի և Մխիթարեան միաբանութեան անցեալ, ներկայ և ապագայ գրական գործունեութիւնն հայ ազգին համար էր և ուրախ ենք ըսել, թէ մեր ազգը ճանչցած է զնայ և կը ճանչնայ մեծ իւր հոյակապ փառքերէն: Նմանապէս Եվրոպայ՝ մանաւանդ գրական Եվրոպայ, Մխիթարայ և անոր միաբանութեան կը պարտի այն կարեւոր ծանոթութիւնը, զոր ունի հայ ազգի և նորայ գրականութեան վերայ: Եւ այն ճոխ մատենագրութիւնը, զոր տուած են Մխիթարեանք իրենց ազգին և Եվրոպայի, միանգամայն, բաւական նպաստած է միջազգային գրականութեան զարգացմանը:

Արդ, այս կամրջին վրա այսպէս ըսելու համար, որ կը զոդէ զԱրևմուտս Արևելից հետ, կարծենք երկու կողմաց իրաւունք հաւասար է, և մենք անշուշտ թերի գործ մը ըրած պիտի համարուինք, եթէ այս կատարելիք հանդէսը ներքին շրջանակին մէջ միայն ամփոփենք՝ լոկ վանական նկարագիր մը տալով անոր: Ուստի ներկայիս ճանչնալով Ձերդ սրբազանութեան անկեղծ համակրանքն և սէրն առ Մխիթար և առ իւր միաբանութիւնը, կարգադիր հանձնաժողովս անհրաժեշտ պարտք կը համարի հաղորդել պաշտոնապէս, որ սոյն հանդէսը տեղի պիտի ունենայ Վենետիկ Ս. Ղազարու կղզիին մէջ առաջիկայ սեպտեմբեր 8-ին՝ ըստ նոր տոմարի: Չհամարձակելով հուսալ, թէ Ձերդ սրբազանութիւնը կարենա իրեն ներկայութեամբ պատուել մեր այս հանդէսը, յուսով ենք, որ գոնեայ Ձեր ներկայացուցիչը մեր մէջ ունենալու ուրախութիւնը պիտի ունենանք:

27 յուլիս 1901
Մնամք ամենախոնարհ ծառայ
նախագահ և գանձապահ՝
Հուսիկ վրդ. Մեհրապեան,
ատենապետ՝ Հայր Եսայի Տայեցի

-2

20 յունիսի 1901 թ.

Բարձրապատիւ Կորիւն վարդապետ

Ղեւոնդ վրդ. Ալիշան նամակաւ անցեալ աւուր յայտնէ, թէ Մխիթարեան միաբանութեան 200ամեայ յոբելեանը այս տարուայ սեպտեմբեր տոնելու միջոցին շատ հարկաւոր է Մխիթար Աբբայի պաշտած Սեւանայ տիրամոր պատկերը այնտեղ Ս. Ղազարու վանքը լինել, խնդրէ մեր միջնորդութիւնը առ Վեհափառ Հայրապետն, որ բարեհաճէ հրամայել այն պատկերը փոխադրել Վենետիկ Ս. Ղազարու վանքը այն պայմանաւ, որ յոբելեան հանդիսէն հետո նոյն պատկերը նուրբ և գեղեցիկ նկարով վերանորոգած՝ վերադարձնին Էջմիածնին անչափ շնորհակալութեամբ: Հայր Ալիշան խնդրէ ի դիմաց ներկայ Աբբահոր և համայն միաբանութեան, որոց խնդիրը ես Ձեր միջոցաւ առաջի առնիմ նորին վեհափառութեան և խնդրեմ, եթէ հնարաւոր կը համարեք Մխիթարեան միաբանութեան խնդիրը յարգել, միջնորդեցէք նորին վեհափառութեան և բարեհաճութիւնը ստանալով՝ պատկերը ուղարկել Ս. Ղազարու վանքը առ Սրբոյն միաբանութեան. մի ձանձրանայք, որովհետև այն միաբանութեան անդամներէ շատերը չեն ձանձրացել հազար ու մեկ թերթեր գրել, արտագրել, սրբագրել, տպագրել և հրատարակել, զորօրինակ Շամչեան, Ինճիճեան, Ալիշան և այլն:

Մեծայոյս եմ Մխիթարեանց խնդիրը կատարելէն յետոյ ինձ ևս քանի տող գրութիւն միամտացնել ժամանակին:

Ձեզ աղոթակից Մեսրոպ արքեպիսկոպոս

-3

Դիւան Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, թիվ 920
19 յուլիսի 1901 թ. ի Ս. Էջմիածին

Արհիապատիւ աբբահոր
Միաբանութեան ուխտին Մխիթարեան
որ ի Ս. Ղազար Տ. Իգնատիոսի սրբազան արքեպիսկոպոսի

Աւագագոյնն ի Միաբանս Մայր Աթոռոյս և Վանահայրն Ս. Կարապետ վանուց Ապրակունեաց (Երնջակ) Գերապատիւ Տէր Մեսրոպ Ս. Արքեպիսկոպոսն գրութեամբ յանուն դիւանապետի ի 20 յունիսի անցելոյ ըստ խնդրոյ Վերապատուելի Հ. Ղևոնդեայ Ալիշանի վաստակաւորին Ս. Ուխտիդ հայցե զմիջնորդութիւն իմ առաջի նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի և Ս. Քահանայապետի Ազգիս Տ. Տ. Մկրտչի յաղագս յղելոյ ի վանդ զհրաշագործ պատկերն Ս. Կուսին Տիրամոր Աբբա

Մխիթարին յորջորջեալ, բերեալ ի վանուց Սեւանայ 1897 ամի ի զարդ յոբելենի հանդէսի երկհարիւր ամենի հաստատութեան արդիւնաշատ վանուցդ Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետն ընկալեալ ի յարգանս միջնորդութիւն երկուց հարց պատուականաց Գերապատիւ Արքեպիսկոպոսին Մեսրոպայ և Վերապատուելի Հոր Ղևոնդեայ բարեհաճեցաւ յղել զպատկերն ի վանսդ ընդ ձեռն դեսպանի պետութեան Ռուսիոյ որ ի Հռովմ պ. Նելիդոֆի 19 ամսոյ գրութեամբ թ. 902 երկուամսեայ ժամանակաւ ի սկզբանէ և ետ հանդէսին, պատուիրելով դիւանիս գրել զառաքմանէ հրաշագործ պատկերինք գերապատիւ տերութեանդ և խնդրելով, զի ետ անցանելս կարևորութեան, հրամայեսջիք վերադարձուցանել այսր ի Մայր Աթոռս:

Կորիւն վարդապետ, քարտուղար
Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց

-4

Նորին բարձր Գերազանցութեան պարոն Ալեքսանդրի Իվանովիչ
Նելիդով, դեսպանի պետութեան Ռուսիոյ ի Հռովմ

Ողորմած տէր

Միաբանութիւն վանուցն հայոց Ս. Ղազարու, որ ի Վենետիկ, ընդ ձեռն անդամոյ Միաբանութեան Ս. Էջմիածնի Մեսրոբ Արքեպիսկոպոսի Սմբատեան դիմելով մեզ խնդրեն ժամանակավորապես յղել ինքեանց զհնագոյն պատկերն Տիրամոր, գտանիցելոյ աստ ի նախաթոռ վանս Ս. Էջմիածնի՝ բերեալ ի վանուցս Սեւանայ, յաղագս ունելու ներկայ երկհարիւրամեակի յոբելեանի հիմնարկութեան մենաստանին Մխիթարեան որ ի Ս. Ղազար ի Վենետիկ, որ ունին կատարել ի 7երորդում աւուր ամսեանն յառաջիկայ սեպտեմբերի ի նոր տոմարի:

Պատկերն այն Տիրամոր կարևոր է և ցանկալի ի յոբելենական հանդիսի Մխիթարեան Միաբանութեան այնու, զի ըստ աւանդութեան ի գտանիլն հիմնադրի Միաբանութեան Մխիթարեան Մխիթար Աբբայն յաշխարհիկ վիճակի կուրացեալ աչոք ի Սեւան կղզւոջ աղոթիւք ընկալեալ է զբժշկութիւն աչաց իւրոց ի պատկերէն այնմիկ Ս. Տիրամոր և ապա անցեալ յԻտալիայ և հիմնեալ զարդ ի վանքն և զմիաբանութիւնն ի Ս. Ղազար կղզւոջ:

Զիջեալ Մեր ի խնդիր Միաբանութեան Մխիթարեանց, Մեք յղեմք զպատկերն այն հրաշագործ ի Ս. Ղազար միայն ևեթ գիտութեամբ բարձր գերազանցութեան Ձերոյ և պաշտպանութեամբ դեսպանատանդ Մեծին Ռուսիոյ՝ խնդրելով ի բարձր գերազանցութենէ Ձերմէ ընդ Ձեռն հիւպատոսարանի պետութեան մերոյ, որ ի Վենետիկ, հասուցանել զայն պատկեր ի վանս Մխիթարեանց և ետ երկամսեայ ժամանակի պահանջել և յղել աստ ի Ս. Էջմիածին:

Վերառաքելով զաղօթս ջերմագինս առ Ամենաբարձրեալն յաղագս երկարակեցութեան, բարեկեցութեան և առողջութեան Ձերդ Բարձր

Գերազանցութեան՝ խնդրեմ ընդունել զհավաստիս խորին յարգանացս և կատարեալն բարեկամութեանս զոր տածեմ միշտ յավուրց անտի պանդխտութեան իմոյ Յերուսաղեմ:

Մնալով միշտ Ձերդ Բարձր Գերազանցութեան ջերմեռանդ աղոթարար

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
թիւ 902. 17 յուլիսի 1901 ամի Ս. Էջմիածին

- 5

Վեհափառ Ս. Հայրապետ Ազգիս Տ. Տ. Մկրտիչ-Հայրիկ
Սրբազնագոյն կաթողիկոս Ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին

Վեհափառ Հայրիկ

Հովուական այցելութիւններէս դեռ նոր վերադարձած էի ի Մարսեյլ և ահայ ժամանեց օգոստոս 6 թուականաւ և 963 համարաւ Հայրապետական կոնդակն, որով հրամայէիք ի դիմաց վեհափառութեանդ և Մայր Աթոռոյ պատկառելի միաբանութեան՝ ներկայ գտնուիլ Վենետիկի Մխիթարեանց երկհարիւրամեայ յոբելեանի հանդիսին և շնորհաւորել ու խնդակցութիւններ յայտնել նոյն բազմարդիւն Միաբանութեան:

Առանց ժամանակ անցնելու անմիջապես ճամբայ ելայ օգոստոս 23/5 սեպտեմբեր հինգշաբթի առաւօտ և Նիսի, Ճենովայի ու Միլանի գծով 30 ժամ երկաթուղիով ճամփորդելով՝ ուրբաթ երեկոյ ողջամբ ժամանեցի ի Վենետիկ:

Միլանի կայարանում Տէր Սուքիաս վարդապետ Պարոնեան և Տէր Թորոս քահանայ հանդիպեցան մեզ՝ որք նոյնպես կերթային ի Վենետիկ իբրև պատուիրակ Փարիզի և Մանչեսթրի ազգայնոց:

Սոքա անմիջապես փութացին ի Սուրբ Ղազար. մենք ալ մեր ողջոյններն յանձնեցինք նոցա՝ հաղորդել Գեր[ապատիւ] Աբբահոր: Յոբելեանի կարգադիր յանձնախմբի նախագահ և ատենադպիր վարդապետներն եկան մեզ ի դեմս Աբբահոր, սակայն արդեն ի խոնջեալ լինելով ի քուն մտած էի:

Հետևեալ առաւօտ, շաբաթ՝ յիշեալք կրկին փութալով ի պանդոկն ուր իջևանած էինք՝ հրաւիրեցին զիս ի վանս, ուր մեզ համար սենեակ պատրաստուած էր: Նաւակն վանուց դուռն ժամանելուն՝ ի ձայն ազդարար զանգակի ակնթարթի մեջ ամբողջ միաբանութիւնն գումարուեցաւ ի դրան և յարգանոք ընդունուեցանք:

Առաջնորդուելով ի Տաճար՝ «Հոգւոց» կարդացի երջանկայիշատակ Մխիթար Աբբահոր գերեզմանին վրայ՝ որ կը գտնուի բեմին կեդրոնը: Յետոյ առաջնորդուեցանք Գեր[ապատիւ] Աբբահոր մոտ, որ սենեկին դրան մեջ սիրալիր ողջագուրմամբ ընդունեց զմեզ. վայրկյան մը յետոյ եկաւ ծերունազարդն և անուանին Հայր Ղեւոնդ Ալիշան՝ ընդ որ ողջագուրուեցանք: Միաբանութիւնն մեր դեմ կանգնած էր յոտին: Համառօտ խոսքերով հաղորդեցի Ձեր Վեհափառութեան և Մայր Աթոռոյ պատկառելի

Միաբանութեան ողջոյններն, օրհնութիւններն և խնդակցութիւններն: Աբբահայրն ամենախորին շնորհակալութիւններն յայտնեց Զերամբ Վեհափառութեան ըրած այս մեծ պատոյն համար: Նոյնպէս մեծանուն Հայր Ալիշան և բովանդակ միաբանական ուխտն խորապես զգացեալ Զեր Վեհափառութեան շնորհած այս մեծ պատոյն առթիվ Յոբելեանի՝ և Հայրական սիրոյն հանդեպ Մխիթարեանց՝ ամենախորին շնորհակալութիւններ յայտնեցին:

Գեր[ապատիւ] Աբբահոր քովէն ելնելով առանց մեզ յատկացեալ սենեակն գնալու փափաքեցայ գերեզմանատուն առաջնորդուիլ, ուր «Հոգւոց» կարդացի հանգուցեալ բազմավաստակ Մխիթարեանց համար և ապայ, գնալով ի սենեակս, մոտիկն Գեր[ապատիւ] Աբբահոր սենեկին՝ ընդունեցի Նորին Գերապատուութեան, Հայր Ալիշանի, Միաբանութեան համայն անդամոց, որպէս և Պոլսոյ Հռովմեական Հայոց Սրբազան պատրիարքի ներկայացուցիչ Ռուպեան Եպիսկոպոսի այցելութիւններն: Հետևեալ օրն՝ կիւրակէ, պատարագեց Գեր[ապատիւ] Աբբահայրն, երգեցողութիւնք կատարուեցան քառաձայն, մասնակցութեամբ իբր 12 ջութակահարաց և մեծ ու փոքր բազմաթիվ իտալացի երգեցողաց՝ որք յաջողականությամբ կարտասանեին հայերէն երգերն Ս. պատարագի:

Վենետիկի պատրիարք-կարդինալը ձախակողմեան դասագլուխն կեցած էր, ծառայնիդ՝ աջակողմեան դասու Աբբահոր աթոռոյն ետև աթոռ ուներ, իսկ Ռուպեան Եպիսկոպոս ձախակողմեան դասու ետև ուներ աթոռ: Զկնի պատարագին փառաւոր սեղան պատրաստուած էր. Գեր[ապատիւ] Աբբահայր իւր աջ կողմն հրավիրեց զմեզ: Սկսան հետզհետէ կարդացուիլ շնորհաւորական հեռագիրներն որք աշխարհի ամէն կողմէ տեղացած էին ի Վենետիկ և որոց մեջ մեծամասնութիւն կը կազմեին մեր սիրելի ռուսահայ եղբարց հեռագիրներն:

Թեպետ որոշուած էր, որ երկու օրուան սեղաններու ժամանակ միայն հեռագիրներն կարդացուին և բանախոսութիւնք երկուշաբթի օրուան գրական հանդէսին մեջ լինեին, սակայն անհամբեր բանախոսներ այս սեղանի ժամանակ սկսեցին խոսել. մեք ևս իբրև կնիք արտասանեալ բանախոսութեանց հանդիսապէս հաղորդեցինք ներկայից, Հայոց Հայրիկի հայրական ողջույններն և օրհնութիւններն: Որոտընդոստ և երկարատև ծափահարութեամբ գոռաց ընդարձակ սեղանատունն:

Պատուական Հայրն Ալիշան, որ դեմս կը գտնուէր՝ կարդինալի քով, ոտքի ելաւ և լարուած լռութեան մեջ դողդոջուն ձայնով մը ըսավ. «Հայրիկն ամէն հայոցս ալ հայրիկն է. կը խնդրեմ, իմ և ամէն միաբանակցաց որդիական սէրն ու անկեղծ մեծարանքներն հաղորդէք», առ որ անմիջապես պատասխանեցի, «Շատ շնորհակալ եմ, հայոց նահապետ, սիրով պիտի կատարեմ Զեր խնդիրն»: Նահապետն Ալիշան, որ իրեն ակնարկեալ որևիցէ գովեստի բառէ կը խրտչէր և կը տխրեցնէր դէմքն՝ ինքն ալ խնդաց այս պատասխանիս վրա: Երկարատև ծափահարութիւնք ծայրահեղութեան հասան, ստիպուեցայ ոտքի ելնել և գլխով շնորհակալութիւն յայտնել համակրական այս մեծ ցոյցին համար, որ կը յայտնուեր այսքան հանդիսապէս և անկեղծապէս վերաբերմամբ Հայոց Հայրիկին:

Հետևյալ օրն՝ երկուշաբթի, զնկնի առավօտեան ժամերգութեան սկսաւ բուն գրական հանդէսն ի մեծ սրահի վանուց. հրավիրեալ էին բացի այլևայլ լատին եկեղեցականներէ, քաղաքային պաշտոնեայք, երեսփոխանք, խմբագիրք և այլ կարևոր անձնաւորութիւնք: Սկսաւ հանդէսն նախագահութեամբ Գերապատիւ Աբբահոր, որոյ աջակողմն կը գտնուէր Ձեր խոնարհ ներկայացուցիչն: Նուագածուաց խումբն նախ գոհաբանական երգ մը երգեց, յետոյ Աբբահայրն բացման ճառն արտասանեց, յորում խիստ համակրալից բանիւք շնորհակալութիւն յայտնեց Ձեր Վեհափառութեան և Մայր Աթոռոյդ պատկառելի Միաբանութեան շնորհած պատւոյն համար: Անդամք Մխիթարեան Միաբանութեան և համայն հանդիսականք ուժգնապէս ծափահարեցին Աբբահոր խոսքերը:

Գերապատիւ Աբբահոր ճառն ավարտելուն Ձեր Վեհափառութեան ներկայացուցիչն ելաւ ոտքի և առ ինքն ուղղեալ Հայրապետական կոնդակն կարդաց, զոր յաւարտելն՝ պոռթկաց ծափահարութեանց ամենաուժգինն: Նոյն այն միջոցին Գեր[ապատիւ] Աբբահայրն և Աթոռակալ Հայր Ալիշան իրենց տեղէն ելնելով եկան ողջագուրեցին զիս և Հայրապետական կոնդակն ընդունեցին ձեռքես: Հ. Ալիշան դողդոջուն ձայնով կրկնեց իւր երեկի խոսքերն: Այս հանդիսական օրերուն մեջ պատկառելի ծերունին միայն երկու անգամ հանդիսապէս խոսեցաւ մեզ հետ՝ միմիայն Ձեր Վեհափառութեան սիրեցեալ անունն արտասանելով և այլ ոչինչ:

Գեր[ապատիւ] Աբբահոր, մեծանուն Հ. Ալիշանի և իմ մեջ այս գործողութիւնք կատարուած միջոցին բովանդակ ներկայից խանդավառութիւնն իւր գագաթնակետին հասած էր. համայն վենետիկյան լրագիրք ողջագուրանաց սույն պարագայն շեշտելով ըսին, թե յոյժ մեծ ազդեցութիւն ըրավ բոլոր ներկայից վրա: Այնուհետև Ձեր խոնարհ որդին ևս բան մը խոսեցավ, որոյ եզրակացութիւն սա էր թե՝ «Մենք մինչ ցարդ գրականութեամբ ճանչցանք զիրար և միայն գրականութեամբ պիտի ճանչնանք զիրար. ուրեմն Մխիթարեանք, շարունակեցեք Ձեր գործն և այլն»: Մեզմե յետոյ խոսեցաւ Կ. Պոլսոյ Կաթոլիկ Հայոց պատրիարքի ներկայացուցիչն Ռուպեան Եպիսկոպոս. սա իւր պատրիարքին շնորհակալութիւններն յայտնելէ յետոյ մասնաւոր ճառաթղթովն ալ անձնականապես փափաք յայտնեց միութեան. իւր խոսքերն դեպի Հռովմ կը նայեին՝ ուր արդեն Եպիսկոպոսն կը բնակի: Յիշեալի այն խոսքերն որք իսպառ անտեղի էին այսպիսի գրական հանդէսի մեջ՝ ընդհանուր դժգոհութիւն պատճառեցին: Աբբահայրն և առաջնակարգ Մխիթարեանք որք մոտս կը գտնուէին՝ ցաւ յայտնեցին մեզ, ըսելով թե այս Եպիսկոպոս Մխիթարեան մը չէ, արժէք չունին իւր խոսքերն: Ճառախոս Եպիսկոպոսն իւր ճառաթուղթն իւր գրպանը դրաւ մի քանի չոր ու ցամաք ծափերու հետ: Ես ի յարգանս Մխիթարեանց լռեցի, բաւականալով Գեր[ապատիւ] Աբբահոր և շուրջս գտնվողներուն ըսել թե՝ «Ես իմ խաղաղասեր Հայրապետիս ներկայացուցիչն եմ. անկեղծ սիրով և սրտի պարզութեամբ եկած եմ Ձեր արդիւնաւոր հաստատութեան յոբելեանը տոնելու, քաղաքավարութեան հակառակ կը համարիմ պատասխանել, ուստի կը բավականանամ արհամարհական լռութիւն մը պահելով»:

Այլ և այլ ճառերէ և հեռագիրներէ յետոյ հանդէսն վերջացաւ և սեղան դրուեցաւ բոլոր հանդիսականաց, նոյն պահուն ևս բաւական թուով հեռագիրներ

կարդացուեցան, որոց մեծագոյն մասի ընթերցումն մնաց, քանզի թիւ համայն հեռագրաց կը հասներ երեք հարիւրէ աւելի: Մեղանը վերջանալու պահուն «Մխիթար» անունը կրող նոր հրատարակութիւն բաժնուեցաւ ներկայից: Տպարանի տեսչութիւնն սոյն հրատարակութենէն փառակազմ օրինակ մը պիտի յղէ Զերումդ Վեհափառութեան: Մեղանէն յետոյ Մխիթար Աբբահոր համար կառուցուելիք արձանին հիմնարկէքն եղաւ. այս արձանն եռանկիւն հիման վրա պիտի բարձրանայ, հիման առաջին քարն զետեղեց Աբբահայրն, երկրորդն՝ մենք և երրորդն Ռուպեան Եպիսկոպոս: Այս առթիւ մագաղաթի վրա յիշատակարան մը պատրաստուած էր, որոյ ընթերցումեն յետոյ երեք եպիսկոպոսունքս ստորագրեցինք: Յիշատակարանն մասնավոր անոթոյ մէջ զետեղուեցաւ հիմաց ներքեւ:

Նախորդ գիշերն լուսավառութիւնք եղան վանոց մէջ. այս երկրորդ գիշերն ուրախութիւնք՝ որոց մասնակցեցաւ Վենետիկի քաղաքն ևս:

Յորելեանի առթիվ Հռովմի Ս. Պապն մի ոսկեզօծ սկիհ նուիրած էր վանքին. նոյնպես Իտալիոյ սգաւոր մայր թագուհին համակրական հեռագրէ զատ մեծ վարագոյր մը տաճարին, որ տակաւին չէ ավարտած և կարժէ իբր 10.000 ֆրանք, այլ և այլք նուիրած էին իրեղէն և դրամ. Մանչեսթրի մերայինք 1000 ֆրանք ի մասնակցութիւն հանգանակութեան Մխիթար Աբբայի արձանին:

Երեքշաբթի օր վանքը ստացած էր իւր սովորական անդորրութիւնն. որոշած էի ճամբայ ելնել՝ սակայն Աբբահոր թախանձագին հրաւիրմամբ մնացի և կարևոր տեղեր և Ռափայելեան վարժարանը այցելելէ հինգշաբթի օր Աբբահոր և Մխիթարեանց մի մասին հետ մեկնեցայ վանքէն՝ ի Սան Ժենոն (Ս. Զենոն) գիւղն, որ Վենետիկէ իբր երեք ժամ հեռի է, և ուր Մխիթարեանք ունին մի ընդարձակ ամառանոց:

Սան Ժենոն գիւղէն իբր մեկ ժամ հեռի Ազոլոյ անուանեալ գիւղին մէջ Ռափայելեան վարժարանի ամառանոցն կա գեղեցիկ դիրք ունեցող բլուրի մը վրա բարձրացեալ: Նոյնպէս Սան Ժենոնէն իբր երեք ժամ հեռի Բատուայ քաղաքի մէջ կը գտնուի Մուրատեան վարժարանը: Մուրատեան և Ռափայելեան կտակաց գումարներն այսօր կրկնապատկուած են շնորհիւ Մխիթարեանց աչալրջութեան և լաւ տնտեսութեան. յիշեալ վարժարանք այսօր բաւական կալուածներ ունին:

Վանուց բարեկարգութիւնն, միաբանութեան մէջ տիրող կատարեալ եղբայրութիւնն, ամենեցուն սէրն վերաբերմամբ միմեանց, ամենեցուն սիրալիր մեծարանքն հանդէպ իւրեանց Աբբահոր, ընծայացուաց պարկեշտութիւնն, միով բանիւ ընդհանուր կարգապահութեան ոգին աչքի զարնող բաներ են: Ամէնքն ալ հաւասարապէս յոտից ցգլուխ մի օրինակ սեաւ պարզ սքեմ կը կրեն, միասին կը ճաշեն, միևնոյն ժամուն միասին կը մտնեն իրենց խուցերն ի քուն, առաւօտներն որոշեալ ժամուն միասին կը զարթնուն, միասին կը գտնուէին յեկեղեցւոջ, առանձնական աշխատութիւններն, պարտեզին մէջ պտոյտնին որոշ ժամերով են:

Ամէնէն աւելի աչքի զարնող պարագայն Հայր Ալիշանի կանոնապահութիւնն է, սովորական պարտականութեանց մէջ այդ պատկառելի մեծ ծերունին, երբ կտեսնէի իւր միաբանակցաց շարքին մէջ իբրև մի պարզ աբեղայ, որոյ մէն մի շարժմանց և գնացից մէջ կը փայլէր իւր կատարեալ

խոնարհութիւնն և աննման հեզութիւնն: Երբ կըսեմ, Հայրիկ, կը տեսնէի իւր անշուք խցիկին մէջ ծռած իւր գրասեղանին վրա, եկեղեցւոյ մէջ իւր գլխակոր նիստ ու կացն, սեղանի ժամանակ հաւաքման սրահի մէջ իւր գլխակոր և բազուկներն խաչաձև լռիկ մնջիկ կեցուածքն, երբ կը տեսնէի այս ամէնը, կարծէս թե ճգնավոր ոմն էր տեսածս. ուստի անհնար էր ինձ ի ներքուստ յուզուիլ: Քանիցս ողջագուրեցի և համբուրեցի այդ մասունքն, որ աւաղ, անցեալ տարի ծանր հիվանդութիւն անցնելէն յետոյ շատ ինկեր է, և այս ձմռան մէջ կը վախցուի, թե միգուցէ նոր հիվանդութիւն մը գայ, որուն դիմադրելու երբեք չունի ոյժ. թեև այս վիճակի մէջ ալ մազի չափ չշեղիր իւր սովորութիւններէ:*

Վերջապէս, Վեհափառ Հայրիկ, սքանչանալով միաբանութեան ընդհանուր կարգապահութեան և յառաջադիմութեան վրա՝ մտերմորեն հարցուցի Աբբահոր այս բանին գաղտնիքը, պատասխանեց թե՝ գաղտնիքն մեծերուն բարի օրինակն է և ամենուս ալ անընչասիրութեան ոգին, որ սկզբունքն եղած է Մխիթար Աբբահոր և որոյ համար կուխտենք: Արդարև, ճշմարիտ գաղտնիքներ որ և է վանքի մը յառաջադիմութեան: Արդար և ճշմարիտ է թե՝ ոչ մի վարդապետի ձեռք մի սանտիմ չկա, բացի մատակարարէն, որ պարբերաբար Աբբահոր կը ներկայէ իւր հաշիվն և ի նմանէ կստանայ սովորական ծախուց դրամն:

Յաւալի է, որ Մխիթարեանք հակառակորդներ ունին, այս բանին առաջին պատճառ կը համարիմ նախանձութիւնն, երկրորդ պատճառն այն է, որ Մխիթարեանք մօտէն գիտակցաբար ուսումնասիրուած չեն մերիններէն, եթէ ոչ՝ բոլորուին տարբեր կերպիւ պիտի վարուէին հանդէպ Մխիթարեանց:

Գեր[ապատիւ] Աբբահայրն նոր ժամագիրք մը տպագրել տուած է. բաւական հակառակութեանց բախելով վերջապէս յաջողուած է տպագրութիւնն և այսօր Ս. Ղազարու վանուց և շատ մը կաթոլիկ եկեղեցեաց մէջ ընդունուած է: Նորին Գերապատուութիւնն իրեն համար յատկապէս կազմեալ մի փառակազմ օրինակն յանձնեց ինձ, որ յղեմ Ձեր Վեհափառութեան և որ ներկայիս հետ թղթատարին կը յանձնուի ապահովագրեալ: Կը խնդրուի Ձեր Վեհափառութենէն խոնարհաբար, որպեսզի բարեհաճիք լաւ մը աչքէ անցնել զայն, մանաւանդ յառաջաբանը: Աբբահայրն լիայոյս է, թէ յառաջիկային նոր տպագրութեան առթիւ աւելի պիտի մոտենայ իւր նպատակին:

Վեհափառ Հայրիկ, իբր երկու շաբաթ պատուասիրելէ յետոյ ի պատուարժան Մխիթարեանց՝ մեկնեցանք և այժմ վերադարձած եմք ի Մարսելլ:

Թե՛ Գերապատիւ Աբբահայրն և թե՛ պատկառելի ծերունին Հայր Ալիշան և համայն անդամք միաբանութեան խնդրեցին ի մենջ հաղորդել Ձեր Վեհափառութեանն իրենց որդիական յարգալիր սերն, անկեղծ երախտագիտութիւնն և անհուն շնորհակալութիւններն իրենց նկատմամբ ցույց տուած Հայրական այս մեծ սիրոյն համար՝ որոյ վասն զգացուած են ամէնքն ալ և չպիտի մոռանան յաւետ, նոյնպես շնորհակալութիւններ յայտնեցին Մայր Աթոռոյ միաբանութեան՝ որոց ներկայացուցիչն ես էի

նոյն հանդէսին մէջ ըստ կոնդակի վեհափառութեանդ: Արդեն հանդիսի օրն իսկ թէ՛ նուաստս և թէ՛ Գերապատիւ Աբբահայրն առանձին-առանձին հեռագրով շնորհակալեաց զգացումներն ամենեցուն յայտնած էինք Վեհափառութեան, անշուշտ ստացաք զայնս: Մասնաւոր խնդիր մը Գեր[ապատիւ] Աբբահայրն և Հայր Ալիշան մասնաւոր շնորհակալութիւններ կը յայտնեն Ձեր Վեհափառութեան այն բարեհաճ հոժարութեան համար, որով հաճած էիք հաւանութիւն տալ Սեւանայ վանուց մէջ գտնուած Մխիթար Աբբահոր մի պատկերն ընծայելու համար Մխիթարեանց, որոց համար ամենաթանկագին նուերն պիտի համարուէր յոբելեանի առթիվ: Շատ կը ցաւին, որ արգելքներու հանդիպեցավ Ձեր Բարձր հրամանի կատարումը:

Ներկայիս մեր միջոցաւ կրկին կը խնդրեն որ բարեհաճեք հրամայել մի վարժ պատկերահանի ճշտիւ առնուլ մի օրինակն նոյն պատկերին և Ձեր Վեհափառութեան վավերագրով յղել զայն ի Վենետիկ ի վանս Ս. Ղազարու: Թէ՛ պատկերահանին և թէ՛ ճանապարհածախսն ինչ որ էլ լինի՝ պատրաստ են վճարելու: Կաղաչեմ, Վեհափառ Հայրիկ, չմերժել ազնիվ միաբանութեան սոյն բարի խնդիրն, որու պիտի մնան Ձեր Վեհափառութեան յաւէտ շնորհապարտ:

Ամենախորին ակնածութեամբ մատչելով ի համբոյր
Ազգախնամ Սրբոյ աջոյ վեհափառ Ս. Հայրապետիդ Ազգիս
և հոգևոր բազմերախտ ծնողին իմոյ՝
մնամ նորին Ս. Օծութեան ամենախոնարհ որդի
Գեւորգ Եպիսկոպոս

14/27 սեպտ. 1901, ի Մարսելլ